ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ-	023102.00.6 «ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-	023102.01.6 «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ-	ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱՁՈՐ 2022

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	023102.00.6 «Օտար լեզու և գրականություն»
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	023102.01.6 «Ռուսաց լեզու և գրականություն»
3. Շնորհվող որակավորումը	Բանասիրության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	Ռուսերեն, հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ուսումնառության ժամկետը	2019-2023թթ.

8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները

Բակալավրի պատրաստման՝ ՀԿԾ յուրացման համար դիմորդը պետք է ունենա միջնակարգ ընդհանուր կրթության կամ միջին մասնագիտական կրթության մասին պետական նմուշի փաստաթուղթ:

Դիմորդը պետք է ունենա համընդհանուր կրթական լավ պատրաստվածություն, լայն աշխարհայցք, ձգտում դեպի գեղարվեստական և տեխնիկական ստեղծագործում: Ռուսաց լեզվի և գրականության մասնագիտացման՝ ՀԿԾ յուրացման ընթացքում կարևորվում է դիմորդի մշակութային ընդհանուր մակարդակը, աշխատասիրությունը և կայուն հետաքրքրությունները կյանքի հոգևոր կողմերի նկատմամբ:

Ռուսաց լեզվի ոլորտում դիմորդը պետք է դրսևորի՝

- ✓ լեզվի՝ ժողովրդի ազգային, մշակութային հիմնական արժեքներից մեկի գիտակցում,
- ✓ լեզվի որոշիչ դերի գիտակցում անհատի մտավոր և ստեղծագործական գործունեության մեջ, կրթության և ապագա մասնագիտացման գործում, ինքնակրթության և հանրայնացման գործընթացում,
- ✓ խոսքային գործունեության տեսակների տիրապետում,
- ✓ լեզվի մասին համակարգված գիտելիքներ, նրա մակարդակների և միավորների փոխադարձ կապերի գիտակցում, քերականական հարաբերությունների իմացություն,
- ✓ բառի բառակապակցության, նախադասության քերականական վերլուծության կարողություն,
- ✓ բառապաշարի գործուն և ներունակ շերտերի, խոսքում հանդես եկող քերականական կարգերի, բառագիտական և դարձվածաբանական ոճական հիմնական միջոցների, գրական լեզվի կանոնների տիրապետման կարողություն,
- ✓ համամշակութային բավարար մակարդակ, որը բուհում ուսումը շարունակելու պայման է:

9. Կրթական ծրագրի նպատակները

✓ ապահովել որակյալ մրցունակ մասնագետների բարձրակարգ պատրաստում ռուս բանասիրության ոլորտում՝ կրթությունական և մասնագիտական առաջատար տեխնոլոգիաների, նորարարական և ավանդական մասնագիտկան գործունեության զուգորդման հիման վրա:

✓ զարգացնել ուսանողների մեջ նրանց անհատականացման որակային հատկանիշներ, ինչպես նաև ձևավորել համամշակութային և մասնագիտական կոմպետենցիաներ՝ համաձայն ԲՄԿ պահանջների.

➢ դաստիարակել ազատ մտածելակերպ ունեցող ստեղծագործ անհատի, որը կկարողանա ինքնուրույն լուծել իր մասնագիտական, գիտական և աշխարհայացքային խնդիրները.

➢ պատրաստել հասարակության գիտամանկավարժական ղեկավար և մշակութային վերնախավ:

10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները
Գիտելիքներ՝ Դրսևորում է տվյալ ոլորտի և մասնագիտական բնագավառի հիմնական ժամանակակից հասկացությունների, տեսությունների ու մեթոդների վերաբերյալ համակողմանի գիտելիք և իմացություն: *Հմտություններ՝* Կարող է մասնագիտական գործունեություն ծավալել և կատարել առաջադրանքներ հմուտ ղեկավարության ներքո, կայացնել որոշումներ սահմանափակ ինքնուրույնության պայմաններում և պատասխանատվություն ստանձնել թիմում: Ունակ է ինքնուրույն շարունակելու հետագա ուսումնառությունը տարբեր ֆորմալ և ոչ ֆորմալ միջավայրերում: *Կարողություններ՝* Կարող է կիրառել քննադատական մտածողությունը, վերլուծելու և եզրահանգումներ անելու ունակությունը, ինչպես նաև դրսևորել որոշակի ստեղծագործական մոտեցում՝ բարդ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջարկելու համար: Կարող է բացատրել և մեկնաբանել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստարկներ և իրավիճակներ մասնագետներին և ոչ մասնագետներին: Կարող է օգտագործել մի շարք ՏՀՏ կիրառություններ համապատասխան ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու ու խնդիրներ լուծելու համար : Կարող է հավաքել, մշակել և մեկնաբանել մասնագիտական բնագավառին առնչվող քանակական և որակական տվյալները՝ հիմնավոր դատողություններ անելու համար: Կարող է կիրառել ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ ծանոթ իրադրություններում խնդիրների լուծման համար, որոնք բնորոշ են մասնագիտական բնագավառին:
11. Կրթական ծրագրի ուսումնական պլանը
Կցվում է
12. Գնահատման ձևերը
Իրավիճակային հանձնարարություններ, գործնական-կիրառական ուղղվածություն ունեցող հանձնարարություններ, հրապարակային պաշտպանություն և ուսանողների նախագծային և հետազոտական գործունեության փորձաքննական գնահատական, հոդվածի նախապատրաստում և գրում, մեկնաբանություններ՝ հոդվածի, գրքի, մենագրության վերաբերյալ), իրավիճակի / դեպքի վերլուծություն, խմբային աշխատանք (տվայլ հիմնախնադրի կոլեկտիվ քննարկում և լուծման ուղիների որոնում), հիմնախնդիրների / սեփական աշխատանքային փորձի քննարկում և անդրադարձ համակուրսեցիների հետ, իրական հիմնախնդրին վերաբերող հետազոտական հայտի նախագծի պատրաստում, գործողությունների կատարում/ցուցադրում (հաշվարկներ, աշխատանք տեքստերի հետ, արձանագրությունների լրացում, հրահանգների կատարում), վիդեոյի և ծրագրային մատակարարման օգտագործում, ներկայացման պաստառի նախապատրաստում, մասնագիտական գործունեության հետևում և իրական վերարտադրություն, կառավարում և զարգացում (ինքնակառավարում և ինքնազարգացում), բանավոր հարցում, թեստային գնահատում, հարց –պատասխան, ընթացիկ գնահատում, ամփոփիչ գնահատում, հայտորոշիչ գնահատում, ձևավորող գնահատում, հետազոտական գնահատում, գնահատվող բանավեճ
13. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները
Ռուսաց լեզվի և գրականության գծով բանասիրության բակալավրի մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝ • համապատասխան ժամկետներում ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով. • մագիստրատուրայում՝ ստանալու մանկավարժության, լեզվաբանության մագիստրոսի

աստիճան, • մագիստրատուրայում՝ ստանալու այլ որակավորման աստիճան:
14. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը
• ՀԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները ապահովված են ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով: • Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը զուգորդվում է մեթոդական նյութերով և անհրաժեշտ ժամանակի հիմնավորմամբ: • ՀԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների շտեմարան, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն: • Ուսանողները ապահովված են բոլոր դասընթացների դասախոսական տեքստերի էլեկտրոնային տարբերակներով, քննական հարցաշարերով, անհրաժեշտ գրականության ցանկով, մշակված թեստերի օրինակով, օրացուցային պլանով, մեթոդական ուղեցույցով: • Գրադարանային ֆոնդը համալրված է ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, հանրային և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր հրատարակություններով և էլեկտրոնային նյութերով:
15. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս
ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ»: